Ամենափրկչի Վանիցն և առաջնորդ ձեր եղբայր մեր Դաւիթ Վարդապետն հաստատեցաք, զի լինիջիք մի հօտ և մի հովիւ։ Այսուհետև յամենայնի հլու և հպատակ կացջիք հրամանաց նորա և սիրով և մըտերմութ[եամ]ք զհնազանդութ[իւն]ն ցուցանիջիք, որպէս և վայել է հաւատացեալոց Քրիստոսի։ Նաև Դաւիթ Վարդապետին պատուիրեցաք, զի քարոզիչն և խրատիչն ի ձէնջ անպակաս արասցէ. զորս և դուք ընկալջիք սիրով և ընտանելութե[ամ]ք, և արդիւնացուսջիք գործովք բարութեան, որպէս զի չնորհաց և ա[ւր]հնութե[ան] փառաց և պսակաց արժանաւոր լինիցիք ի Քրիստոսէ Յիսուսէ Տ[եառ]նէ մերմէ, որ է ա[ւր] հնեալ անզրաւ յաւիտենիւ յաւիտեանս, ամէն։ Գրեցաւ ի թուին Հայոց ՌՃԹ (=1660), Սեպտեմբեր ամսոյ Դ. (=4)»։ (5)։

Սակայն 1663 *Ապրիլ* 30*ին Յակոբ Կաթողիկոս՝ Ամենափրկիչ Վանքին Թեմէն դարձեալ կ՚անջատէ Գանդիմանի և Ճղախոռի չրջանները, ինչպէս ցոյց կու տայ հետեւեալ կոնդակը. «Յի[սուսի] Քրիստոս]ի ծառայ Յակոբ կթղկս. Ամ[ենայն] Հայոց...։Յորմէ ժամանեալ հասցէ գիր ա[ւր]հ-*

---

(5) Ե. Քիւրտեան, Նիւթեր Յակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի կենսագրութեան համար. «Հասկ» ԻԱ. Տարի, 1952, Փետրուար, թիւ 2, էջ 42—43։